ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 4 անդամներ:

Բացակա էր՝ Ալեքսանդր Բլոխինովը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր ՝ Արարատ Աբրահամյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82.1-ին հոդվածի 6-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել հաշվետու տարում Ֆիոլետովո համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ա/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2023 թ.-ի փետրվարի 21-ի նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2023 թ.-ի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն հավելվածների

2. Կատարել փոփոխություն Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 2023 թ.-ի դեկտեմբերի 27-ի թիվ 39-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի

3. Հաստատել Ֆիոլետովո համայնքի 2024 թ-ի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ա/

Լսեցին
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ/

Հարցը քննարկվել է ավագանու նիստի ժամանակ, ավագանիները հավանություն չեն տվել տարեկան աշխատանքային պլանին, արվել են առաջարկներ, որոնք հաշվի կառնվեն տարեկան աշխատանքային պլանի լրամշակման ժամանակ և հարցը կներառվի ավահանու հաջորդ նիստի օրակարգում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով և 82.1-ին հոդվածով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի «ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 58-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվացքների նախարարության ներկայացրած համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույցը, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

Հաստատել Ֆիոլետովո համայնքի 2024թ-ի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-0 Դեմ-3 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

ՄԻԽԱԻԼ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ _____

Նիստն արձանագրեց՝ ը _____